

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն
Կանոններին Չենթարկվող Այցելուների և Հաճախորդների Վերահսկում

Լոս Անջելեսի Շրջանում գործող բիզնեսների բացման և ավելի շատ անձանց կողմից հանրային վայրեր վերադառնալուն զուգահեռ՝ շատ կարևոր է, որ յուրաքանչյուր ոք շարունակի պահպանել ֆիզիկական հեռավորության պահանջները և վարակի վերահսկման գործողությունները՝ ինչպիսին է դիմակների օգտագործումը: Ցավոք, որոշ ձեռնարկություններ կամ վայրեր կարող են հայտնվել վատ իրավիճակում այն հաճախորդների կամ այցելուների վերահսկման տեսանկյունից, որոնք գիտակցաբար կամ անգիտակցաբար չեն պահպանում կանոնները: Այս Ուղեցույց-փաստաթղթի նպատակն է տրամադրել որոշ <<գործիքներ>> չենթարկվող անձի հետ տեղի ունեցած դեպքից առաջ, ընթացքում և հետո նախապատրաստվելու համար:

ԱՌԱՋ

- Ձեր բիզնեսի համար տեղծեք Վերահսկիչների/Աշխատակիցների խումբ
 - Այս խմբի դերն է՝ կազմակերպել կանոնավոր հանդիպումներ անձնակազմի և վերահսկիչների միջև՝ ստեղծելու, վերանայելու և գնահատելու անվտանգության միջոցառումներն աշխատակիցների համար
 - Վերահսկիչները և անձնակազմը պետք է աշխատեն միասին, որպեսզի մշակեն անվտանգության միջոցառումներ՝ կարգավորելու այնպիսի իրավիճակները, երբ հաճախորդը չի ենթարկվում հանրային առողջապահության կամ ընկերության արձանագրություններին՝ ներառյալ դիմակների օգտագործումը:
 - Վստահ եղեք, որ ամբողջ անձնակազմը վերապատրաստվել է անվտանգության միջոցառումների համար, ներառյալ՝ ճանաչել հաճախորդի կողմից կանոններին, ինչպես նաև ընկերության ռազմավարությանը չենթարկվելը և՝ ինչպես կարգավորել այդպիսի իրավիճակը: Վերապատրաստման դասընթացը պետք է ներառի նաև հանդարտեցման (դեսկալացիոն) միջոցառումներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել, եթե հաճախորդը շարունակի հրաժարվել ենթարկվել կանոններին:
 - Անվտանգության միջոցառումները պետք է ներառեն այն, թե ինչպիսի միջոցներով աշխատակիցները և վերահսկիչները կարող են աջակցություն տրամադրել այն դեպքում, երբ հաճախորդը հրաժարվում է ենթարկվել կանոններին:
 - Այս թիմերը կարող են օգտագործվել բիզնեսի ամբողջական անվտանգության ապահովման համար:
- Ստեղծեք հաղորդակցության ծրագիր՝
 - Կիսվեք հաղորդագրություններով սոցիալական ցանցերում, ընկերության վեբ կայքերում, և հաճախորդների կամ այցելուների հետ ուրիշ կապի միջոցներում, որոնք կընդգծեն ընկերության քաղաքականությունը դիմակների օգտագործման, ֆիզիկական հեռավորության պահպանման և վարակի վերահսկման գործողությունների հարցում:

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելեսի Չրջանի Հանրային Առողջապահության Վարչություն
Կանոններին Չենթարկվող Այցելուների և Հաճախորդների Վերահսկում

- Տեղադրեք մեծ, հստակ տեսանելի [նշաններ](#) ամբողջ հաստատության տարածքում՝ ընդգծելով դիմակների և վարակի վերահսկման այլ միջոցառումների անհրաժեշտությունը՝ ինչպես գրավոր պահանջվում է Հանրային Առողջապահության Վարչության կողմից: Հաճախորդների համար ուրիշ [նշաններ](#) հասանելի են Լոս Անջելեսի Չրջանի Հանրային Առողջապահության Վեբ կայքում:
- Տարածեք տարբեր լեզուներով տպագրված քարտեր, որոնք ընդգծում են հաճախորդների համար անհրաժեշտ անվտանգության միջոցառումները: Տվյալ քարտերը կարող են անձնակազմի համար օգտագործվել որպես հղում կամ Անգլերեն լեզվին սահմանափակ տիրապետող անձնակազմի համար՝ որպես չենթարկվող հաճախորդներին տրամադրվող քարտեր:
- Մտածեք տեղում լրացուցիչ դիմակներ կամ դեմքի վահաներ ունենալու մասին այն անձանց համար, ովքեր կգան հաստատություն առանց դրանց:
- Առավելագույնի հասցրեք հաճախորդների կամ այցելուների համար ծառայություններից հեռակա կարգով օգտվելու հնարավորությունները, ինչպիսիք են՝ դրսի կողմից մոտենալ-վերցնելը կամ առցանց գնելը:
- Այն բիզնեսների համար, որոնք անձնակազմ չունեն, դիտարկեք տեսախցիկներ տեղադրելու տարբերակը՝ ձեր բիզնես հաստատության ներսում տեղի ունեցած իրադարձությունները ձայնագրելու համար: Լրացուցիչ նշաններ պետք է տեղադրվեն, որպեսզի մարդիկ իմանան, որ իրենց ձայնագրում են:
 - Սա կարող է օգնել հանդարտեցնել չենթարկվող հաճախորդներին, եթե նրանք իմանան, որ իրենց ձայնագրում են:

ԸՆԹԱՑՔՈՒՄ

Եթե հաճախորդը ժամանել է ձեր հաստատություն և դիմակ չի կրում (կամ հանում է դիմակը՝ դեմ գնալով հաստատության կանոններին), ապա նրանց կանոններին ենթարկեցնելու համար մտածեք հետևյալ քայլերի իրականացման մասին : Հետևյալ քայլերը կարող են ձևափոխվել ընկերության անվտանգության ծրագրին համապատասխանելու համար՝

1. Ընտրեք անձնակազմի մեկ անդամ, ով կմոտենա այցելուին կամ հաճախորդին և հանգիստ և քաղաքավարի կերպով կհիշեցնի խանութի քաղաքականության մասին: Մա կօգնի սահմանափակել անձնակազմի միաժամանակ մի քանի անդամների ներգրավումը:
 - Անձնակազմը կարող է հղում անել և՛ փակցված նշաններին և/կամ վերևում նշված տպագրված քարտերին:
2. Առաջարկեք դիմակ, եթե հաստատությունը նախատեսում է լրացուցիչ դիմակներ հանրության համար:
3. Եթե հաճախորդը պնդում է, որ իր բժիշկը խորհուրդ է տվել իրեն չկրել դիմակ, առաջարկեք նրան դրսի կողմից մոտենալ-վերցնելու կամ առցանց ծառայություններից օգտվելու

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն
Կանոններին Չենթարկվող Այցելուների և Հաճախորդների Վերահսկում

տարբերակները կամ ցանկացած այլ տարբերակ, որի միջոցով ծառայությունները կարող են մատուցվել, բայց կարգադրեք նրանց, որպեսզի դուրս գան հաստատության տարածքից: Վստահ եղեք, որ պարզաբանում եք հաճախորդի համար, որ ոչ թե հրաժարվում եք նրան ծառայություններ տրամադրել, այլ պարզապես թույլ չեք տալիս ներս մտնել՝ դիմակ չկրելու պատճառով:

4. Եթե հաճախորդը շարունակում է չենթարկվել, ևս մի քանի անգամ կրկնեք, որ ոչ ոք չի կարող մուտք գործել հաստատության տարածք առանց դիմակի՝ COVID-19-ի ճգնաժամի պատճառով և Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության հրամանի համաձայն: Տեղեկացրեք հաճախորդին, որ նա կարող է վերադառնել հաստատություն այն դեպքում, եթե դիմակ ունենա:
5. Այն դեպքում, երբ դիմակ կրելուն ուղղված հրահանգները խախտող հաճախորդը իրեն դրսևորում է ագրեսիվ կերպով, սպառնում է կամ թշնամական վերաբերմունք է ցույց տալիս, պետք է զանգահարել 911, որպեսզի միջամտեն օրինապահ մարմինները, և անհրաժեշտության դեպքում հեռացնեն հաճախորդին հաստատությունից:

ՀԵՏՈ

- Միջադեպից հետո հնարավորինս արագ քննարկում կազմակերպեք ներգրավված յուրաքանչյուր աշխատակցի հետ:
 - Նմանատիպ միջադեպերը կարող են շատ սթրեսային լինել անձնակազմի անդամների համար, և շատ կարևոր է հնարավորություն տալ նրանց արտահայտել իրենց մտահոգությունները և այնպիսի հարցերի լուծումներ առաջարկել, որոնք կարող են ուղղվել ապագայում նման միջադեպերին արձագանքների բարելավմանը:
 - Այս միջադեպերը կարող են բարձրաձայնվել նաև Վերահսկիչների/ Անձնակազմի հաջորդ հանդիպման ընթացքում՝ անձնակազմի բոլոր անդամների հետ բարելավման հնարավորությունների քննարկման համար:
- Հաշվի առեք նաև այն հանգամանքը, որ պետք է փոփոխվեն այն աշխատակիցները, որոնք նշանակվում են չենթարկվող այցելուների կամ հաճախորդների հետ միջադեպերին, որպեսզի այդ խնդրի լուծման համար անընդհատ պատասխանատվություն չկրի մեկ անհատը:
- Պատրաստ եղեք կատարել լրացուցիչ մաքրման աշխատանք, ինչի անհրաժեշտություն կլինի այնպիսի տարածքներում, ուր այցելել է դիմակ չկրող անձը: